**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման, սպասարկման և տեխնիկական օժանդակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2016 թվականի մայիսի 18-ին կնքված N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23 պայմանագրում 2017 թվականի հունիսի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ավարտը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն՝ Հաստատվել է պայմանագրի 2-րդ կիսամյակի վճարման և ծառայությունների մատուցման ժամանակացույցները:

Փոփոխության հիմնավորում՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ կետը, 18.05.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23» ծածկագրով գնման պայմանագրի 4 և 7.3 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով, որ «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ավարտը երկարաձգվել է և համապատասխան ֆինանսական միջոցները նախատեսվել են:

Պատվիրատու՝ ***Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ***